

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՍ ՈՆԵՒ ԹՂԹԱԳՅՈՒԹԻՒՆ
ՊԵՏԻ ԵՒ ՈՒՂՂԱՆ ԱՍ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագիրներն ետ չեն դարձուիր,
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր
ԱԶ Գ Ա Յ Ի Ն, Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Գ Տ Ո Ս	
ՂՐԵ, ՈՂՋ	
Կահիրէի հասարակարան	50
Վեցամսեայ	30
Շրջակայից հասարակարան	60
Վեցամսեայ	35
ԱՐՏԱՍԷՐԱՆԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	3 րոպեայ 18
Վեցամսեայ	10
ՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎԱՍԹԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	7 րոպեայ
Վեցամսեայ	4
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՂԹԱՏԱՐԻ ԵՄԻՔԸ	
Թերթին վարչութեան վրայ է	

ՇԱՐԱԹ ՆՈՅԵՍ. 25/8 ԴԵԿՏ.

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 53

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11ԷՆ
ՍԿՍԵԱՎ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՍՈՒՆ
ՅԻՉ ՏԻՍԱ ՍՄԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ՍՏՈՐ
ՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»Ի
ԸՆԿԱՂԱԿՐՆԵՐՆ ԸՆՎԱԿԵՐ ԿԸ ՆԿԱՏ-
ՈՒԻՆ:

ՕՐԻՆԱԿ ՍԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ
ՄԵՐ ՄԷՂ

Թէ ո՛ր են հայ ժողովրդին բարոյա-
կան մակարդակը ազնուացնելու, զայն
ազիտութեան խաւարէն դէպի լոյս
առաջնորդելու պաշտօնին կոչուող պա-
րոնները. ինչո՞ւ լուռ կը կենան, և
չեն օգտակար ըլլար իրենց հանրային
գործունէութեամբը. ահա հարց մը որ
կը կազմէ նիւթը «Նոր Դար»ի վերջին
մէկ թիւին մէջ հրատարակուած յօդ-
ուածի մը որուն վրայ մեր ուշադրու-
թիւնը դարձած ըլլալով ի ներքեւ կ'ամ-
փոփենք զայն որ կրնայ օրինակ մը
ըլլալ մեր պարոններուն:

Ա.

Յօդուածագիրը իր յօդուածին ա-
ռաջին մասին մէջ խօսքը ուղղելով
ուսեալ և խելացի դասակարգի պատ-
կանող անհասանելի գործինակ փաս-
տաբաններու, բժիշկներու, երկրա-
չափներու, վարժապետներու, կ'ըսէ
թէ՝ «Ժողովներու մէջ մեր հանրային
գործերը վարողները սոյն դասակար-
գի անձինքները պիտի կրնան ըլլալ.
բայց ցաւալին այն է որ ասոնք
ամենքէն աւելի կը խորշին հան-
րային պաշտօններէ: Ասոնց հա-
մար ապրիլ կը նշանակէ՝ երբեք չի
ժանրաբեռնուիլ » և է հանրային
գործով մը և նոյն իսկ մտածմուն-
քով:

Ասոնց ապրելու ծրագիրն է առա-
ւօտեան բունէն արթննալ ժամը 8-9
ին, անցնիլ դէպի գործարան և կամ
գրասենեակ, այնտեղ թէ՛ կամ սուրճ
ընդունիլ և ապա նամակները նայիլ
ու յաճախողներու հետ տեսնուիլ.
Ժամը 12ին ճաշել ու քնանալ մինչև

երեկոյեան ժամը 8ը, արթննալ ու
անմիջապէս երթալ զլիւպ. նստիլ
թղթախաղի մինչև զիշերուան ժամը
11«1»2, ապա ընթրիք, արբեցու-
թիւն, և ապա ինքզինքը յանձնել ու-
րախ կանապանին որ ամեն «ուր որ
կամենայ»:

Եւ ահա միջնակարգ ու համալսա-
րանական բարձրագոյն դպրոցին մէջ
տասնեակ տարիներ շարունակ գիտու-
թիւններ ուսումնասիրող հայ երիտա-
սարդը կը կատարէ իր կենսագրական
ծրագրին մէջ այն ամէնը, ինչ որ
նոյն դիւրութեամբ և հաճութեամբ
կը կատարէ Բալխացի հորստա-
ցած թուրք իշապանը, որ իր կեան-
քին մէջ ցոյց տուած չէ թէ կայ
գիտութիւն, հանրային զգացում, ի-
տեալներ, բարձր հոգեկան զուար-
ճութիւններ:

Մեզմէ իրաւունք ալ կ'ունենան
պահանջելու հանճարեղ անուանել այն
ամեն հայ որ փաստաբան է և կամ
երկրաչափ ևն, և որ մեզ ոչինչ սով-
րեցուցած է, որոյ ունեցած պաշարէն
հայ հասարակութիւնը բնաւ օգտուած
չէ, որոյ հոգեկան և մարմնական աշ-
խարհը նոյնն է՝ ինչ որ վայրենի և
անկեղծ թաթարները:

Տեսած էք դուք, որ մի հայ երկ-
րաչափ օրին մէկը, մի որ և է մե-
քենայի շարժողութեան օրէնքները
բացատրէ հայ ընթերցողին, և կամ
բժիշկ մը՝ առողջապահութեան:

(*)Տեսած էք փաստաբան մը որ
անձնուիրաբար իր գրիչը նուիրէ գոնէ
մէկ ժամ հայ լրագրի սինակներուն:

Տեսած էք դուք այս կարգի գի-
տուններ որ գոհն իրենց մի քանի
վայրկեանները և կամ մի քանի դա-
հեկան հայ ժողովրդի խաւարի մէջ
մի փոքրիկ լուսոյ շառաւիղ ձգելու
համար »:

Յարգելի յօդուածագիրը ըսել կ'ու-
զէ թէ՛ որքան որ ասոնք կոչուած են
կազմուելու հայ ժողովրդին միտքը
և ողին, և զայն առաջնորդելու դէպ
ի լոյս, որքան որ ասոնցմով կրնայ
թարմանալ հայ հասարակութեան
կեանքը, որքան հայ ժողովուրդը ա-

(*) Ի՞նչ. ի՞նչ. — Ասոնցմէ ոմանք կ'ընեն
ունենան իրենց անձնական կիրքերը յա-
ղեցնելու անձի մը դէմ, ոչ թէ ժամերով
այլ օրերով իսկ կը նստին սինակներ լե-
ցընելու փողոցային լրագրի մը մէջ:

տոնց պէտք ունի, ընդհակառակը
այնքան ատոնք հեռի քաջուած են:
Եթէ հանրային ո և է պաշտօն մը
առաջարկուի ասանկներուն, անմիջա-
պէս «ըբարձր»նին կ'առարկեն. բայց
ատոնք չեն քաջուիր իրենց պարագայ
ժամերուն ամբողջութիւնը «պառ»ե-
րու, սրճարաններու մէջ անցնելու,
ուր վայրաբանութիւններով զբաղու-
ած ամենակ կը դանեն. եթէ իրենց
գործատեղիներուն մէջ պատահին
պարագայ ժամերը՝ ա' մի հարցնէք...:

Բ.

Յօդուածագիրը իր յօդուածին երկ-
րորդ մասին մէջ խօսքը ուղղելով
գրական հրատարակագիրներուն կ'ը-
սէ, «Մեր գրական և հրատարակա-
խօսական ասպարէզը անապատ դար-
ձած է»:

Շարունակ ամեն կողմէ ազգակ
կը լսուի թէ՛ «գրողներ չի կան»։ Այդ
բողոքի հետ միասին, եւ ուշադրու-
թեամբ կը հետեւի մահացուցականե-
րուն և դեռ մահուան ոչ մի յայտա-
բարութեան մէջ չիմ հանդիպած մեր
բազմաթիւ գրողներու անուններուն
որոնց գրուածները հրատարակախօս-
ներու կողմէն սիրուած են: Մեր են
ատոնք: Մեր են նաև այն հարիւրա-
ւոր գրողները որոնք մի քանի տա-
րիներ առաջ սրանչացման արժանի
եղանդով կը լեցնէին հայ լրագրու-
թեան սինակները կոկիկ և առաջնոր-
դող յօդուածներով, ժողովրդական
ինքնուրոյն վէպիկներով: Ճշմարիտ է
թէ՛ վատը լաւի հետ խառն էր, բայց
միթէ պակասութիւն կ'ար նիւթի ու
զրոյի, եթէ ժողովուրդը տեղը գե-
ղեցիկէն չէր կրնար զանազանել
միթէ քննադատական մարմինը հնար
չունէր վատը լաւէն ընտրելու:»

Սոյն յօդուածին մէջ «Նոր-Դար»ի
յարգելի յօդուածագիրը կ'ժանրանայ
կարգ մը հրատարակէն քաջուող գրող-
ներուն վրայ. ինչպէս որ «Նոր-Օր» իր
«գրական հրատարակ» վերնագրով
հրատարակած խմբագրականին մէջ
կը ծանրանար կարգ մը ինքնակոչ և
իմաստակ խմբագիրներու վրայ յոր-
դոր կարգաւով որ իրենց կարողութե-
նէն վեր նիւթերու վրայ չը ճառեն:
Թող չ'անսան եթէ կը փափաքին որ
հրատարակ իրենց վրայ խնայ:

ՀԱՅՎԱԿԱՆ ՄԱՐԴԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Հոովմի մէջ սկսած է հրատարակ-
ուիլ «Պօլիտիկա» անուն հանդէս մը,
որ իր վերջին թիւին մէջ հայ ազ-
գին մարդաբանութիւնը կը նկարա-
գրէ:

«Բազմավէպ» նաև այդ առթիւ
հայ ցեղին վրայ մարդաբանական ու-
սումնասիրութիւն մը հրատարակելով
կ'ըսէ:

Հայ ազգը Միջերկրական մեծ ցե-
ղին կը պատկանի(*).— Այս ցեղը հե-
տեալ հինգ խմբերու կը բաժնուի,
և են. Ա.—Բասկեանք, բնիկ Սպա-
նիոյ. Բ.—Կովկասացիք, բնիկ Կով-
կասի. Գ.—Քամակեանք, բնիկ հիւսի-
սային և արեւելեան Ափրիկիոյ. Դ.—
Սեմականք, բնիկ հարաւ-արևմտեան
Ասիոյ և Մալդա կղզոյ, և բայ աս-
տի աշխարհիս ամէն կողմն ցրուած
կը գտնուին. Ե.—Հնդ-երոպացիք,
բնիկ հիւսիսային Հնդկաստանի, Աֆ-
ղանիստանի, Պիլոսիստանի, Հայաս-
տանի, Պարսկաստանի, ֆոքը Ասիոյ
և Եւրոպոյ: Հնդերոպական ցեղին
մէջ կը գտնուին ամենէն քաղաքա-
կիրթ ազգերն. այս ցեղը երկու խմ-
բերու կը բաժնուի, մին արեւելեան,
միւսն արևմտեան: Արեւելեան խմբին
մէջ կը գտնուին, Ա.—Հնդկաստանի
Հնդիկները, Բ.—Հայք, Պարսիկք,
Գ.—Իւրքք հայրն: Իսկ երկրորդ խմբին

(*) Այս մեծ ցեղն կոչի մահ կովկաս-
եան, Սպիտակ կամ հնդ-ատլանտեան ցեղ:
Մարդկային ցեղի մէջ առ թէ մտաւորա-
կան և թէ ֆիզիքական տեսակետով, ամե-
նէն գերազանցն է. և մարդկային յառաջա-
դիմութեան մեծ մասը ասոր կը վերագըր-
ուի: Այս ցեղի ֆիզիքական բնորոշ յա-
կութիւնքն են. հասակ փոփոխական, հնդ-
համրապէս միջակ կամ բարձր, բայց ոչ
գաճաճ: Մորթմ վարդագոյն սպիտակ, եր-
բմն թիւագոյն: Մազերը երկայն, շատ
ամզամ գանգուր, սև, շագանակագոյն կամ
խարտեաշ (թիչ անգամ կարմիր) բնաւ սա-
րային: Մօրթք՝ խիտ և մոյն գոյններով.
մարմին՝ ընդհանրապէս մազոտ, մամաւանդ
մարդկանց: Ծակատը բարձր: Գանկի ըն-
դունակութիւնը մօտ է 15000 խ. հորդ. ե-
րես երկայնածև, այտուկը քիչ մը դուրս
ցցուած, զիմանկեան աստիճանը բարձր, ա-
տամուկ փոքր և ուղիւսայնաց: Աչք՝ սև,
թուխ կամ կապտագոյն, և կամ այս գոյ-
ններու զանազան աստիճաններով. բերանն՝
հորիզոնական. քիթ՝ շատ դուրս ցցուած,
երբմն ալ արժուային:

մէջ կը դասուին, Ա. կեղտը, Բ. Լա- տինը, Գ. Յոյնը, Դ. Ալբանացիք, Ե. Գերմանացիք, Չ. Սլաւներ, Ե. Խառնածին ժողովուրդը: Հայք Պարսկաց հետ կը նկարագրուին. հասակ՝ միջին, մորթ ընդհանրապէս թխազոյն. մազերն՝ շագանակագոյն, մարմուք խիտ և ուռճացեալ. քիթ մեծ. գանկ ձուածե, ճակատ՝ միջին աստիճանի բարձր. աչք՝ մեծ. շրթունք բարակ. կզակ՝ նեղ. վիզ՝ ոչ երկայն: Դիմանկարն լուրջ: Մեր ազգին ցեղական ծագման վրայ ներկայ աեղեկութիւնը բաւական համարելով, կ'անցնինք վերոյիշեալ թերթին նոր մարդաբանական ուսումնասիրութեան: Սա մանրամասն տեղեկութիւն կուտայ մեզ զբարացի ազգաց՝ Ռուսաց, Պարսից, Թրքաց. և ընդհանրապէս իր տեղեկութիւնը կը բազէ գիտնական Ռայփլէյէն. ըստ այս մարդաբանին.

«Հայերն բարձրագլուխ են: Նաեւ այն ամէն տեղ ուր դարերով կը գտնուին՝ բաժնուած բուն ընաշխարհէն, կը պահեն իրենց կազմութեան նախկին տիպարն: Ամենէն խելացի ժողովուրդն է, աշխատասէր, և արեւելեան ազգաց մէջ ամենէն խաղաղասէրն է, վաճառականութեան մէջ և սակաւապետութեամբ Հրէից կը նմանի: Ընդ ամէնէն 5 միլիոն են, կէսէն քիչ մը աւելին թուրքիոյ մէջ կը գտնուին, իսկ մնացածն Կովկասի և Պարսկաստանի մէջ»:

Մեր վրայ ուրիշ ոչ սակաւ ճանապարհորդագրութեանց մէջ կը գտնենք այս տեսակ տեղեկութիւնք: Մարդաբանական տեսակէտով՝ Շանար իր ուղեգրութեանց մէջ, մեր մասին շատ խօսած է: — Ռ. ֆոն Լըբէրգը՝ գերմանացի գիտնականն «Կովկաս և իւր ժողովուրդն» վերնագրով գրքին մէջ, Հայերը կ'անուանէ գնահատող, տաղանդաւոր, շահասէր, շրջահայեաց, ճարտար, վաճառական. անցնելով բնախօսական տեղեկութեանց, կ'ըսէ որ կովկասեան ազգաց մէջ ամենէն բարձրագլուխ՝ Հայերն են. և ինքը ինչպէս ուրիշ գիտնականք, գլխոյ բարձրութիւնը ուղեղի շատութեան նշան կ'ընդունին: կը գրէ.

«Եթէ ըզեղի չափն հոգեկան տաղանդին աստիճանին համար նշանակութիւն մ'ունի, պէտք ենք խոստովանել թէ երկայն և լայն գլուխն աւելի հանճարեղ կ'ըլլայ: Բայց կ'երեւի թէ բարձրութիւնն աւելի նշանակութիւն ունի: Եսքիմացոյցն շատ երկայն, բայց յարկածե է, անոնք շատ բթմաբառ են: Մինչդեռ բարձրագլուխ Հայերն, կաւկասեան ցեղին ամենէն տաղանդաւորն կ'երեւան»:

Կ'անցնինք ուրիշ տեղեկութեան մը, որ մեր շուշափած խնդրայն հետ կապակցութիւն ունի: Մնցեալ տարի հոկտեմբեր 3ի Պիուլինի աշխարհագրական կաճառին ժողովոյն մէջ, հոչակաւոր պրոֆ. Ռոտուլֆ Վիլիսով, կը խօսի Լեման և Պէլքը գիտնականաց հետազոտութեանց վրայ՝ զորսկատարեցին Հայաստանի մէջ: Մեր

երկիրը բաղդատմամբ ուրիշ տեղեաց, հնագիտական և աշխարհագրական տեսակետով՝ դեռ շատ քննուած չէ: Լեման ինչպէս արդէն ազգիս բանասիրաց ծանօթ է, իրեն հետազոտութիւնքն կատարեց վանայ մէջ: Տեղացիք անբաւ միջոցաւ օգնեցին այդ գիտնականին հետազոտութեանց. և նա կրցաւ եկեղեցեաց հիմանց մէջ գտնուած քարերու վրայի՝ խիտ հետաքրքրական արձանագրութիւններն ընդօրինակելու: Ճշմարիտ է որ սոյն արձանագրութիւնք, մեր ազգին հետ յարաբերութիւն չունին, այլ կը վերաբերին Եւքսինեան Պոնտոսի ֆաղդէացոյց, բայց ինչ որ ալ լինի, անոնք մեր աշխարհին նախնի ժամանակներէն մնացած հնագիտական գտնածերն են: Պրոֆ. Պէլքը չընդունիր որ նոյայ տապանը հանգչած լինի Արարատ լեռան վրայ, վասն զի ըստ իր գիտութեան, նոյն ատեններն այդ անունը կը տրուէր ամբողջ հիւսիսային Հայաստանի և կը յիշատակէ տեղացի աւանդութիւնները, որոնց համեմատ՝ փոխանակ Արարատ լեռան, Լուր երկրին մէջ Նիսի լեռն է, ուր հանգչած է նոյայ տապանն: Նոյն հետազոտութեանց ատեն, կը գտնեն արձանագրութիւն մը երկրեզուեան, այսինքն գաղղեական և ասորական բեւեռագրերով, և այդկից կը հաննենոյն անունները: Վերոյիշեալ ժողովոյն ատեն, քննութիւնք մեր ազգին հետ կապակցութիւն ունենալով, կը խօսուի նաեւ մեր բնախօսական մասին: Եւ Հայքս կը ներկայացուինք Հնդ-Եւրոպական ազգ մը, կարճագլուխ, մազ՝ սեւ, աչք՝ թուխ, մորթ սպիտակ: Լեզուի մասին որոշ գաղափար մը չեն ունենար:

* *

Հալլէի մէջ նաեւ մարդաբանական կարգ մը ժողովներ տեղի ունեցան և ատենց մէջ վիճարանութեան առարկայ եղաւ Ռուսին ծագման խնդիրը: Բոսֆ. Վիլրոֆի կարծիք յայտնեց թէ Ռուս ցեղը սկանդինավեան ծագում ունի: Ռուսները վերջը ուրիշ ազգերու հետ խառնուելով կազմած են այս օրուան արամներու ցեղն:

* *

Աւելի հետաքրքրական ուսումնասիրութիւն մը կարդացուած է Բոսֆ. Հէրմանի կողմէն. ըստ Պ. Հէրմանի մարդը իր մարմնական կազմութեան նախնական ձևին հաւատարիմ մնացած է. մարդուս երկու ոտքի վրայ գնալու և մաքրելու պատճառը ուրիշ բան չէ բայց եթէ շղային աղբրի կազմութիւնը որ ուրիշ կենդանիներու քով չի կայ: Ատոր համար է որ մաքրցող կենդանիներուն մեծ մասը ինչպէս նաև կապիկները երկու ոտքի վրայ չեն կրնար բախլ:

Վ Ե Ր Զ Ի Ն Լ Ո Ւ Ր

Պ. Բրուկէր, Դեկտ. 6ին Լա-Հէյ հասած է:

ԱԶԳԱՅԻՆ ՆԻՒԱՆԴԱՆՈՑ Ի Կ, ՊՈՒԼԻՍ

Ազգին մեծախառ այս հաստատութեան թիւ Կ. Պոլիս Եֆտի-Գուլէի դուրը ընդարձակ, տափարակ, ու քառակուսի դիտնի մը վրայ կառուցուած է 1832 ին, այսինքն՝ 68 տարի առաջ: Իսկ 1888 ին վերաշինուած է բարուկիւր: Բովանդակ շէնքը հոյակապ ձեւակերտ մըն է, ու զըլխարարապէս յորս յատուկ մասերու կը բաժնուի: Նախ, կայ նոր շէնքը, երկու յարկի վրայ կառուցուած ու ներքնապէս գեղեցկօրէն յարդարուած: Այս գոգորիկ շէնքը, որ իբրև հիւրանոց կը ծառայէ, հաճելի տեսք մը կը պարզէ:

Երկրորդ, կայ արւանց յատկացեալ վիթխարի շէնքը, որու ճակատը Պէլքեան Ամիրայի կիսարձանը գետեղուած է: Այս հսկայ շէնքը եռայարկ է: Ներքնայարկին մէկ մասը — իբր անկեղանոց կը ծառայէ, ուր 40ի չափ հասունցած ծերեր կը պատուարուին: Մէկ մասն ալ թղթանոցի ու մումարանի յատկացեալ է: Հոս կը պատրաստուին սիկարի թուղթ ու զարդարուն մոմեր՝ ամէն պարագայի յարմար:

Այս յարկին մէջ, մեծ սենեակի մը մէջ, շրբուժական քանի մը տեսակ գործիներ զետեղուած են: Միջնայարկը Արսաֆիկ հիւանդութեանց յատկացեալ է: Իւրաքանչիւր հիւանդասրահ իր յատուկ անունը ունի. զոր օրինակ, Ս. Լուսաւորիչ, Սուրբ Ներսէս, Ս. Շնորհալի կային: Այցելուները, փոխանակ մանուածոյ պտոյտ ընելու ու հիւանդաց վրդովում պատճառելու, ամենայն դիւրութեամբ կրնան ճշտել իրենց հիւանդին քով երթալ: Միայն թէ նախապէս դիտնալու են թէ իրենց հիւանդը ո՞ր հիւանդասրահին մէջ կը գտնուի ու ո՞ր թիւը կը կրէ: Հոս կան նաև մասնաւորներու յատուկ սենեակներ, հիւրանոց մը որու մէջ փոքրիկ զրազարան մը կայ ու բժշկաց սենեակ մը: Վերաբուժական սենեակը ևս այս յարկին վրայ է, ուր տարաբաղդ հիւանդներ բարձրորդի աղբեղութեան ներքև կը մեծնին ու յետոյ յարութիւն կառնեն. բաւական գործիներ ունին որոնք մարդը պահուած են: Վերնայարկը ներքին հիւանդութեանց յատկացեալ է: Ծանր վիճակ ունեցող հիւանդները առանձին անանուն հիւանդասրահի մէջ կը դարմանուին: Ինչպէս ակներև կ'երևի, այս ալ գեղեցիկ կարգադրութիւն մըն է հիւանդները անդորր պահելու համար: Այս յարկն ալ թոշակաւորներու յատուկ սենեակները, հիւրանոցը ու բժշկաց խորհրդարանը ունի:

Այս յարկին արեւելեան մասը ապուշներու ննջարանն է: Այս իրական թշուառներէն հիւանդ եղողները մասնաւոր տեղ մը կը դարմանուին քաղցրագորով հոգածութեամբ: Երրորդ, կայ քիչ շատ բարւոքուած ապուշներու ննջարանն է: Այս իրական թշուառներէն հիւանդ եղողները մասնաւոր տեղ մը կը դարմանուին քաղցրագորով հոգածութեամբ: Երրորդ, կայ քիչ շատ բարւոքուած ապուշներու ննջարանն է: Այս իրական թշուառներէն հիւանդ եղողները մասնաւոր տեղ մը կը դարմանուին քաղցրագորով հոգածութեամբ:

Խիստ կոկիկ շինուածը մըն է: Ամէն մէկը կը դիտեմ արցունքոտ աչքերով ու կը համոզուիմ թէ ազգը բան մի իննայած չէ ասոնց հանգստութեան համար, ասոնց ննջարանները նախանձ շարժելու չափ մաքուր է: Ամէնքն ալ մահճակալներու վրայ կը ննջին: Չորրորդ կայ կանանց յատուկ մեծ շէնքը, նոյնպէս երեք յարկի վրայ շինուած ներքնայարկին մէկ մասը իբր անկեղանոց կը ծառայէ, մէկ մասն ալ իբր ճաշարան, ու բազանիք կը ծառայէ խելակորոյս կիներու ու օրիորդներու: Այլ կողմը փոքրիկ պարտէզ մը կայ, Եւայի այս սրտառուջ աղջիկները իրենց նախամօր չափ կը սիրեն ծաղիկները: Միջնայարկին արեւելեան մասը ծերանոցն է, իսկ արևմտեան մասը կանանց յիւսարանոցն է: Հոս, բացի ձրիներու սեպհական տեղերէ, թոշակաւորներու համար մասնաւոր եօթը սենեակներ կան: Ոմանք դիտ բժշկ կարծելով՝ դարմանելու համար հիւանդներ կ'առաջարկեն առանց գիտնալու իսկ թէ բուն սրտառուջ հիւանդները իրենք են. — աւա՛ղ: Վերնայարկին արեւելեան կողմը կանանց հիւանդասրահն է ուրոյն սենեակներու բաժնուած, իւրաքանչիւր սենեակ իր մասնաւոր անունը ունի. զոր օր. Ս. Հոփսիմէ, Ս. Շուշան ու Ս. Սանդուխտ, կային: Այս յարկին վրայ են նաև թոշակաւորներու սենեակները, վրաբուժական սենեակը, հանգիստեղանոց սենեակը ու գլխութեան քոյրերու պերճաշուք սենեակը: Որբանոցը այս վերնայարկին արևմտեան կողմը կիցնայ, ուր 130ի չափ երկսեռ տղայք կը դաստիարակուին չորս վարժուհիներու օժանդակութեամբ, երկու վարժուհիներ ևս ձեռագործի դասեր կ'աւանդեն: Արանց կողմը 15ի չափ հիւանդասրահն է ու այլ հոգածոներ կան: Կանանց կողմը 4 մայրապետներ կը հսկեն, մայրապետներէն երկուքը գիշերները արանց կողմը կը հսկեն: Բժիշկներն են Տր. Ն. Տողաւարեան՝ ներքին հիւանդութեանց, Տր. Չարգարեան վիրաբոյժ, Տր. Մոնճերի յիմարարոյժ, երեք օգնական բժիշկներ ևս կան:

Այս փոքրիկ աշխարհը իր մէջ ունի փոքրիկ մատուռ մը, դեղարան մը, շուրի մեքենայ մը, իր մէջ կը պարունակէ 1,060 անկողին:

Կառուցման թուականն, այսինքն՝ 1832էն մինչև 1900 Յունվար մէկ, 90,000 հիւանդ, ծեր, տղայ ու խելաքար ընդունուած են: Եւ ասոնցմէ 80,000ը բժշկուելով արձակուած, 9,000ը մեռած են ու 1,000ը դեռ հաստատութեան մէջ կը մնային Յունվար 1ին, 68 տարուան մէջ ծախք եղած է 420,000 Օսմ. ոսկի: Տարեկան ծախքն է 10,000 ոսկի: Վեհափառ Կայսրը ամենուն ծանօթ գլխարկութեամբ օրական 150 քաշ միս ու 600 քաշ հաց յատկացուցած է Ազգ. Տան:

ԱՐՅԻՆԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Յաջորդ թուով պիտի հրատարակենք Լսարան-Ընթերցատուն ընկերութեան Գործադիր Ժողովոյ Դիւանի ընտրութեանց արդիւնքը:

Ա Չ Պ Ա Յ Ի Ն

«Արևելք»-ի մէջ կը կարգանք. Գահիրէի մէջ կազմուած Որբախնամ մարմին մը ծանուցարով մը փափաք կը յայտնէ Արևելայ Որբանոցներէն մէկուն մէջ երկու որբ պատասպարելի իր կողմէն հոգացուելով հարկ եղած ծախքերը. արդեօք Արևատակէ վարդապետ, որ հրատարած է գործի չէր նայեր, ինչ վարդապետական կամ տեղապահական ազնիւ զոհողութիւններ զոհեալ, փափաք յայտնած է եղեր այդ որբերը յանձնել տեղոյս Բողոքական Որբանոցի խնամոց, թէ ան ալ ընտիր հաստատութիւն մըն է. Այդ. Որբանոցին գոյութիւնը սիրելի ի վեր հակառակ տպաւորութիւն մը ներգործած է Արևատակէ վարդապետի համար, որովհետև Մուշեղ վարդապետ զայն հաստատած է, որովհետև Մուշեղ վարդապետ այդ առթիւ հարկ եղած նախապատրաստութեանց հայկթայթման համար ամբողջ քաղաքս և փողոցներ յօծարած է պատիւ և 50—60 ոսկի արծողութեամբ կահ կարասեաց հանգանակութիւն մը կատարել, ևն, ևն, դարձեալ որովհետև Մուշեղ Որբանոցիս Հոգաբարձութիւնը գործուն և անշահախնդիր անձնատարութիւններէ կազմուած է:

Երբէք արամազրութիւն չունիմ Մուշեղ Մ. վարդապետը և Արևատակէ վարդապետը իրարու հետ բաղադատութեան գնելու, վասն զի շատ սխալած ու թերացած պիտի ըլլամ. նպատակս չէ մեր ամէնուս սիրեցեալ Մուշեղ Մ. վարդապետին վեհօգի և գերազնիւ յատկութիւնները պարզել, անոր իմաստուն գործունէութիւնը և արծանեաց առաւելութիւնը յայտագրել, և վերջապէս իր տեսակին մէջ Մուշեղ վարդապետ իր կոչման բուն իսկ համապատասխանող վարդապետ մը և առաջնորդ մը ըլլալը խոստովանել. ասոնք ծանօթ են ամէնուն. իմ հասկոցն ուզածս սա է թէ Արևելայ վիճակը ցորչափ Արևատակէ վարդապետի հովուութեան յանձնուեցաւ, նոյն ժամանակամիջոցին մէջ վիճակը երբէք չվայելեց այն օգտաշատ սնունդութիւնները, որոնք կը սպասուէին ի հարկին նաև առաջն. տեղապահէ մը.

Կ. Պօլսի լրագրիւնները կը գրեն թէ Իսկիւտարցի Սիւսեան Միլիտիչ անուն մէկը, սակէ 2 տարի առաջ, Կիւլբուրսի Լառնաքա քաղաքն երթալով, հոն հիւրընկալուեր է Յակոբ անուն ոստիկանի մը տունին մէջ: Սիւսեան, երկու տարի ձրի ուտել խմելէն վերջ, իր երախտագիտութիւնն յայտնելու ուրիշ միջոց չէ գտեր, բայց եթէ առուանգել իր հիւրընկալի գեռատի կիներ, չմոռնալով և տան արժէքաւոր նիւթերն ալ հետ տանելը: Այդ երկու սիրահարներ Մէսսաթըրի շաքենաւով ճանաչայ երբ են եղեր Ամերիկա փայտելու համար. բայց իրենց գողութեան և փախուստի լուրն իրենցմէ առաջ հասած լինելով Չիկոնի առջև ձերբակալուեր և ապերախտ գողն ու անհատարարի մէջ շրջախաղաղ վերագարձուեր են Կիւլբուրս:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոնէն Գեկտ. 3 թուականաւ եկած հեռագիր մը կ'ըսէ թէ՛ Օրան-

ժի ազատ նահանգին վերաբննիչ դատարանի փոխ-նախագահը կողմըրեր է Հողմանտական կղերականութեան, որպէսզի բարձր ջանքերն ի գործ դնէ պատերազմին վերջ մը տալու համար, քանի որ Օտար տերութիւններուն միջամտութենէն յոյս չ'կայ:

—Անգղիական կառավարութիւնը տարեկան 500,000 ֆրանքէն աւելի կը վճարէ լարա Սալըզլըրիին, իր որդուոյն, քեւորգիներուն և այլնին, որոնք այլ և այլ կարևոր պաշտօններ ունին: Լորտ Սալըզլըրին ինք կ'աւանդէ տարեկան 125,000 ֆրանք: Իր տղան՝ 37,500, քեւորգիին՝ 125,000, ուրիշ մէկ քեւորգիին՝ 50,000, փեսան՝ 102,500, որիչ քեւորգի մ'ալ ունի որ կ'աւանդէ տարեկան 62,500 ֆրանք:

—Վիէնըր թակալութիւնը լրագրիւր կ'ըսէ թէ բոլորական ազգային ընկերութիւն մը կազմակերպուած է՝ որուն նպատակն է Բոլոնիան՝ Աւստրիոյ, Գերմանիոյ և Ռուսիոյ լուծէն ազատել: Այս կազմակերպութեան կիզբոնատեղին Բարիզ է, բայց շատ մը գաղտնի ճիւղեր ունի Աւստրիոյ, Գերմանիոյ, Ռուսիոյ, և ուրիշ շատ մը քաղաքներու մէջ: Այս ընկերութեան անգամ Բոլոնիացիները կուզեն Բոլոնիոյ նախկին թագաւորութիւնը վերահաստատել:

Պ. ԳՐՈՒԿԷՐ ԵՒ ՎԻՔՐՈՐԻԱ ԹԱՎՈՒՆՆԵՐ

Լոնտոնէն Նոյ. 28 թուականաւ կը գրեն թէ՛ Պ. Գրուկէր Մարտիի հասնելուն պէս անգղիերէն լեզուով երկար հեռագիր մը ղրկած է Վիքրորիա թագուհւոյն որու մէջ իր եւրոպայ ճամբորդելու պատճառները կը յայտնէ: Պ. Գրուկէր կ'ըսէ ի մէջ այլոց թէ այս պատերազմը անգլոթ ընաւորութիւն մ'ունի, թէ պարապ տեղը երկու ազգերը սոյ մէջ կը ձգէ, թէ՛ միջամտութեան մը անհրաժեշտ է:

Պ. Գրուկէր այդ հեռագրով յանուն մարդկային զգացման և իրաւանց կը խնդրէ Վեհապետութիւնն որ անաչառ քննութիւն մ'ըլլայ Պօէրներուն իրաւունքներու մասին:

Թագուհին այդ հեռագիրը Լորտ Սալըզլըրիին ղրկած է, որ պատասխանելու հարկ չ'կայ ըսեր է:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Գծուար կացութեան մը մէջ կը գտնուի Չինաստանի խնդիրը, նոր առաջարկներ, նոր բանակցութիւններ միշտ իրար կը յաջորդեն. ու վերջը չ'գար ասանց:

Տեսէք ինչ կը գրէ Բէքինէն «Թայմզ»-ի թղթակիցը:

«Բան մը չեմ կրնար գրել, կ'ըսէ թղթակիցը, Չինաստանի և Տէրութեանց նախարարներու միջև հոս եղած հաշտութեան բանակցութիւններու մասին:

Ո՛ր է խնդիր կարելի չ'է կարգադրել մինչև որ Չինացիք՝ Տէրութեանց առաջարկները չ'ընդունին ու այդ առաջարկներն ալ եղած չ'են դեռ:

Պայմաններ կային որոնց Անգղիոյ և Իտալիոյ անգլոյս ներկայացուցիչները

համաձայն չ'էին: (Առաջինը չ'էր ուզէր որ Չինաստան վաճառականական դաշնագրութիւնը քննէ. երկրորդը կը պնդէր որ պէտք է Չինաստանի վաճառականութիւնը Տէրութեանց ֆոնդորին տակ աւանդուի. ասոցանքի վրէժարութիւնը երաշխաւորելու համար) հիմակ հաւաներ են:

Ներկայանալի առաջարկներուն ուշանալը կացութիւնը հետզհետէ աւելի կը դժուարացնէ:

Այդ դժուարութիւնները երբեք են. Նախ՝ յանցաւորներու զխառուել, ինչ որ դժուար թէ ընդունուի:

Երկրորդ՝ առնուազն 60 միլիոն անգղիական ոսկի տուգանքի մը վրէժարութիւնը:

Երրորդ՝ վաճառականական դաշնագրութեանց վերաբննութիւնը:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

ԱՆԻՇՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱԿԸ

Գահիրէի Յոյն գաղթականութեան մեծահարուստ գրամատներէն Պ. Աչիբուրու որ վերջերս Փարիզ գնացած էր իր հիւանդութիւնը դարմանելու համար՝ մեռած է:

Պ. Աչիբուրուի կտակը երէկ Յունական հիւպատոսարանի միջոցաւ բացուած է:

Պ. Աչիբուրու կը թողու երկու ամուսնացեալ աղջիկներ և երկու մանչ զուակ:

Պ. Աչիբուրու հետեւեալ գումարներն կտակած է.

Բարեգործական ընկերութիւններու դպրոցներու և կրթական հաստատութեանց (*) 30,000 ոսկի:

Իր ծննդավայրին (Վլօր) 15,000 ոսկի: Մահմետականաց Բարեգործական ընկերութեան 1000 ոսկի:

Գահիրէի հեղինակական գաղթականութեան բարեգործական հաստատութեանց 8000 ոսկի:

Աչիբուրուի հարստութիւնը 995000 ոսկի կը հասնի. որուն մնացեալը թողած է իր զաւակներուն:

Ամուրի սղութեան պատճառաւ Կաղի ընկերութիւնը 10% 15 յաւելում մը պիտի ընէ սովորական չափին գնոյն վրայ:

—«Ալ-Մուսթաթ» լրագրի անօրէն-խմբագիր՝ շէյխ Ալի Եուսուֆ, Սուլթանի փեսայ՝ Մահմուտ փայայիլի հացկերոյթ մը տուեր է:

Կսուի թէ Մուսին Պէյ նորէն ետ վերադարձեր է Պոլսէն, Տամատ Մահմուտ փայայիլի և Սուլթանի միջև եղած հաշտութեան խնդիրը եփեցնելու համար:

—Առաջուց ծանուցած էինք թէ՛ Տեղոյս կառավարութիւնը՝ Կարմիր ծովի եզերքը ոսկի հանքեր փնտռելու արածութիւն տուած էր անգղիական ընկերութեան մը: Նեղոսէն վաթսուն մղոն հեռու՝ Մարմարիոնի հանք մը գտեր են յիշեալ երկրախոյզները:

(*) Տ. 10. Լաբրան-Բոթիթատու ընկերութեամ Յորդանիոյ գործադիր ժողովոյ ուշադրութեամբ կը յամծարարեմք:

—Սուտանի 1901ի պիւտճէն ել և մտից նախարարութեան ներկայացուած է: Առաջիկայ տարւոյ մէջ Սուտան 191,000 եգիպտական ոսկի ծախք պիտի ունենայ:

—Անցեալ շրթերաթի առաւօտ ժամը 7ին Մէնչիէի հրապարակը կախեցին Մահմուտ-էլ-Մարքաւի անուն արար մը որ իր կինն սպաննած էր:

—Այս առաւօր ու Պատ-Իւլ-Իսալ-քի հրապարակը կախաղան բարձրացուցին ժամը ճիշդ 7ին Եագուպ Հաննա անունով խալտի մը՝ որ Սիւրացի մը սպաննած էր այս տարւոյ Յունական անալիս մէջ: Գիտիլ ժամ մը կախուած մնալէն վերջը Փոխադրուեցաւ Գասէր-էլ-Ալիի կառավարական հիւանդանոցը:

—Թոբրից վիճակահանութեան Գեկտեմբերի առաջին պարգիւր շահող թիւն է 998,228:

—Այս օրուրնէ սկսեալ Աթապա-էլ-Իստրա Սէյիտէ-Չէյնայ և Տահէր-Սէյիտէ-Չէյնայ երթեկեկող թուամիջները մինչև Մաուարտի կամուրջը պիտի երթան: Երթեկեկութեանց վարձքը միշտ նոյնը պիտի ըլլայ, և ամեն 3 վայրկեան անգամ մը պիտի մեկնին թուամիջները:

ԱՆԻՇՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԵՍԱՎԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Փոռ-Սայիտի գաղտնի ոստիկանութիւնը Գահիրէի ոստիկանութեան հետագրած էր թէ երբ անիշխանականներ Փոռ-Սայիտէն դէպի Գահիրէ մեկնած են:

Երբ անիշխանականները կայարան հասան, գաղտնի ոստիկաններ որ հոն դիտմամբ կը սպասէին, նշմարեցին զիրենք, և ուր որ դնացին իրենց հետեւեցան:

Վերջապէս հայրենակից հացագործ մը կէս գիշերուն հիւրկալեց զիրենք իր սենեակը: Գաղտնի ոստիկանները մինչև առաւօտ հոն սպասեցին: Երբ առաւօտ եղաւ անիշխանականները դուրս ելան սենեակէն, ուղղակի Ապաիի ճամբով գնացին խրտիվական պալատին մօտերը կանգ առին:

Ասանցմէ երկուքը վանդակապատին մէկ անկիւնը իսկ միւսը աւելի հեռուն անցնող գործողը կը գիտէին: Այն վայրկեանին երբ Ն. Բ. Խրտիվը դէպի պալատը կուգար, անիշխանականներն երեքն ալ կառկածի շարժուակեր ըլլին, որուն վրայ զիրենք հրակող գաղտնի ոստիկանները անմիջապէս ձերբակալեցին:

Վ Ի Թ Պ Ա Կ

«Նոր Օր»-ի անցեալ թուով «Արտաքին Լուրեր»-ու մասին մէջ գրաշարաց սխալ բնութագրով Մարին անուն անձի մը պատրաստած գինին, Իստպոլի բոլշի Պ. Մարնիի զիակները պահելու հասար գտած զեղին անունին հետ շփոթուած է:

Միւրգա աղան իր այդ աստիճանները աստիճանները առաջնոյն իրեն նուիրուած շիշ մը գինին առթիւ ըրած է, և բոլշի Պ. Մարնիի ըրած գիտը այդ գինին հետ երբեք անշուքիւն չ'ունի:

ԼՐԱՔԱՂ

ԹՈՒՐԿԻԱ

«Արմենիա»-ի մէջ կը կարդանք :

Հոկտեմբեր ամսոյ մէջ Կարնոյ ուսուսական հիւպատոսը իրեն հետ ունենալով ուսուս ենթասպայ մը, երկու քաղաք և իւր խոհարարը, Կարնէն Գղիի գծով կերթայ Գարբերդ, հոն ուսուսական հիւպատոսարան մը հաստատելու համար։ Երբ Գարբերդէն կը վերադարնայ, կուզէ Գուզուլչանի գծով Երզնկա երթալ։ Գուզուլչանի գաւառապետը և դատաւորը բաւականի չափ զօրքով, ուսուսական հիւպատոսին ի պատիւ, միասին ճանապարհ կեննեն դէպի Երզնկա գալու, Գուզուլչանի կեդրոնէն մի ժամ հեռաւորութեամբ Ապղատ բնակավայրէն անվտանգ անցունելու համար, ուր խեղճ Գղիի ժողովուրդը տարին 10-20 անգամ կողոպտուելու և մարդոց զոհեր տալու բաղդն ունեցած է միշտ և երբ գիտած է թէ՛ տեղական կառավարութեան և թէ՛ Երզնկայի միւշիքի Զէքի փաշային, որոնք նոյն Ապղատ բնակավայրէն 6 ժամ հեռու կը գտնուին միշտ անխելի մնացած է խեղճ ժողովուրդին ձայնը։ Ահա նոյն բաղդը կուսնենայ և Կարնոյ ուսուսական հիւպատոսը, երբ կուզան Ապղատ անցնելով Մահմուտի Մէզրէ կամ Գանլի-Գաւազ բնակավայրէն, յանկարծ անմատչելի Մէրճան լեռան կողքերէն դուրս կուգան 3-400 ասպատակներ, որոնք կը յարձակին ուսուսական հիւպատոսին, զօրաց և գաւառապետին վրայ և երկուստեք մէկ քանի մարդիկ մեռնելէն յետոյ, կառնեն կը տանին 10 ձի և ուսուսական հիւպատոսի 800 ոսկին ամենին որ կը գտնուի վրանին։ Այդպէս հարուստ աւարով մը կրկին կը բարձրանան իրենց նուիրագործուած անմատչելի լեռն, ուր թափուծ է Գղիի խեղճ ժողովուրդեան շատերու արիւնը։

Ռուսական հիւպատոսը հազիւ մազապուր իւր հոգին կազատէ ու իւր վերջին շունչը Երզնկայ միւշիքի Զէքի փաշայի քով կառնէ։ Բայց արդեօք խորամանկ աղուէս Զէքին ի՞նչ դիւք բռնեց այդ պարագային. միայն կը լսենք թէ սուլթանը հրամաններ որոտացեր է որ այդ Տէրօիմցի աւազակներուն վրայ զօրք հանեն։ (Կարծեմ այս անգամ ալ մէկ քանի խեղճ աղքատիկ Գիւրտէրու գոմեր պիտի վառել տայ ու հաւատացնէ թէ ահա պէտք եղած պատիժնին կրեցին։)

ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ ՀԵՏԱԲՐԲՐԱՇԱՐԺ ԺՈՂՈՎ ՄԸ

Օտէսայէն կը հեռագրեն թէ՛ նոյն քաղաքին մէջ հետագրքը շարժ կրօնական համաժողով մը տեղի ունեցաւ։ Այս ընկերութեան գլխաւոր նպատակն է՝ տնային աշխատութիւններէ զատ ամէն աշխատութիւններ ջնջել։ Այս ընկերութիւնը հիմնադրին անունով Մալվանլինա կը կոչուի։ Ընկերութեան անդամները մութ գոյն կոշտ կերպաս կը հագնին, հացով և պտուղներով կ'ապրին աշխարհին վերջը մօտ է կ'ըսեն, և տարին երկու անգամ դաշտին մէջ մի նակեաց տեղ մը կերթան, կամ ձիւն ձմեռին, մարդ, կին, և մանուկ կը մեր-

կանան և ամբողջ գիշերը մարմինին ձիւնը կը քսեն՝ կարծելով թէ իրենց արարիչը պիտի սեննեն։

ԱՉԱՏԱՐԱՐ ԹԱԳՈՒՀԻՆ

Վերջերս Բորթուկայի թագուհին, որ շատ լաւ լողալ գիտէ, ճամբէն անցնելու ատեն կը տեսնէ թէ՛ ձկնորս մը որ անխոհեմաբար շատ հեռուները գացեր է, քիչ կը մնայ որ պիտի խեղդուի։ Վեհանձն թագուհին նկատելով որ իրեն և խեղդուող ձկնորսին տեղոյն միջև հեռաւորութիւնը քիչ է և կրնայ օգնութեան հասնիլ, վայրկենաբար կը նետուի ջուրը և կը յաջողի ողջ առողջ ցամաք հանել ձկնորսը։ Գերմանիոյ կայսրը Օգոստոս փառ Վեհագետուհոյն Ազատարարութեան Շքանշան մը պիտի նուիրէ։

ՅՐԱՆՍԱՅԻ ԻՄԱՌԻՒՐԸ

1801ին Ֆրանսան պատերազմի և ծովային գործերու համար կը ծախէր 351 միլիոն ֆրանք, զանազան պարտքեր կ'ընէր, այսինքն փոխ կանէր 108 միլիոն ֆրանք։ Իսկ հասարակաց կրթութեան, արդարութեան, ներքին գործերու, վաճառականութեան և յիւր կը ծախէր յետոս և եօթը միլիոն ֆրանք։

Հարիւր տարի յետոյ այսինքն 1901ին Ֆրանսան կը ծախէ։

Պատերազմի և Երկրային գործոց համար 1,127 միլիոն, փոխառութեան . . . 1,264 միլիոն, կրթութեան, վաճառականութեան, արդարութեան կայն . . . 675 միլիոն, ուրեմն 1801ին Ֆրանսան կը ծախէր հիւսիս հարիւր տասն և վեց միլիոն իսկ 1901ին նա կը ծախէր երեք միլիար բառասուն և ութ միլիոն, այսինքն գրեթէ վեց անգամը 1801ի։

Ի՞նչ գեղեցիկ ճամբայ է որ Ֆրանսան ըրեր է մէկ դարուան ընթացքին մէջ։

Եթէ այս կերպով շարունակուի լինի արդեօք ի՞նչ պիտի ծախէ Ֆրանսան 2001 թուականին, այսինքն մէկ դար յետոյ։

Le Gérant J. MUNIER

Տպագ. «Միւրքիւն».— Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՕՆԷՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Հիոնի հանրաճանօթ դրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբ ամենուս վստահութիւնը կը վայելէ։

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Հիոնի քաղաքապետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Հիոնէզի միջոցաւ ամեն տեսակ դրամական և քուէտի ֆոնսիյէի, Վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ։ Սմաւկան չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած։

Փափաքողները հաճին դիմել Նիւպոսի վրայ փաստաբան Ռաբիթարիի գրասենեակը։

Թղթակցութիւն և կամ դրամ զըրկել հետեւեալ հասցէին։

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գատիկոնը։

Կը բժշկէ բերնի և ակուայի ամեն տեսակ հիւանդութիւնները։ Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9։

ՊԵՍԵՆԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՅ ԵՒ ՏԻԿԱՆՅ

ԵՒ ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսիթի մեծ պողոտային վրայ Տայիրայի Սանիթի դիմացը, ճախիկն ելեկրական գործիներու վաճառատներ։

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմուլ Պատ. յաճախողները, գործի մարութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտագոյնութեան կողմէն։

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեւագիտութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին։

ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂՖ. ԳԱՉԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապահ

Նիսու-Տիբլեթի լիզարանին դիմացը.

Օգտուն ու զուարճայի գիրք մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու սննդարար կերակուրներու զանազանութիւն, անխարդախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը գիւրամատչելի գիներով. ահա՛ Գաղանճեան եղբարց ճաշարանը։

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի գառնայ հայկական ճաշարանին։

Տ Պ Ա Ր Ա Ն

Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Սոյն նորակազմ տարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն.։

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամօք և ճաշակաւոր սպազմութեամբ։

ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ